ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ «ԻՐԱՎԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ» ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

28.02.2023 16:33

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը փետրվարի 27-ին Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում մասնակցել են Եվրոպայի խորհրդի գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2022թթ տարածաշրջանային «Իրավաբանի մասնագիտության հզորացում՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան» թեմայով տեղի ունեցած քննարկումներին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Եվրոպայի խորհրդի կողմից մշակվող Փաստաբանների իրավունքների պաշտպանության կոնվենցիային վերաբերող հարցեր:

Փաստաբանների պալատի ներկայացուցիչների կողմից բարձրացվել են նաև որոշակի հարցեր՝ ընդունվելիք կոնվենցիոն կարգավորումների վերաբերյալ:

Հատուկ ուշադրության է արժանի Եվրոպայի խորհրդի փորձագետների տեսակետը, վերջին օրերին ակտուալ դարձած, փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքի և դրա իրավական պաշտպանության երաշխիքների վերաբերյալ:

Եվրոպայի խորհրդի փորձագետները հայտնել են դիրքորոշում՝առ այն, որ փաստաբանի մասնագիտական գործունեությունը ենթակա է պաշտպանության, որի իրավական երաշխիքները գործում են պաշտպանության նպատակին ուղղված գործողություններ նախաձեռնելու պահից, անգամ եթե դրանք իրենց բնույթով իրավաբանական գործողություններ չեն:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })